

ՎԵՐՆԱԳՐՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԱՆՎԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Վերնագրի երևույթի բացառիկությունն ավելի ու ավելի մեծ թվով ուսումնասիրողների՝ (ինչպես լեզվաբանների, այնպես էլ գրական քննադատների) ուշադրությանն է արժանանում: Վերջին շրջանի հրապարակումներում մշակվում են վերնագրերի կարգավիճակի, դրանց գոյաբանության, տիպաբանական բնութագրական մեծությունների (պարամետրերի), առանձնահատուկ գործառնությունների հետ կապված հարցեր, ուսումնասիրվում են դրանց ռաբանական գործառնությունների հնարավորությունները, պարզաբանվում են վերնագրերի ընտրության վրա ազդող գործոնները:¹

Գոյություն ունեցող հետազոտություններում վերնագիրը դիտվում է իբրև բովանդակության տարր, նշան, ներկայացնում և ավարտում է գեղարվեստական ստեղծագործությունը՝ որպես ամբողջություն:

Բանասերները համակարծիք են, որ վերնագիրը «գեղարվեստական ձևավորման ավարտական փուլն է, որից հետո բովանդակությունը գոյություն ունի իբրև ինքնուրույն կառույց»:² Վերնագիրը, իբրև բովանդակությունից ձևականորեն առանձնացված (տեղադրությամբ և առոգանությամբ, ընդմիջմամբ) տարր՝ տեքստի նկատմամբ դիրքորոշման վերջնական որոշակիացման առումով գրավում է այսպես կոչված՝ նշանակալից դիրք:³

Հանդիսանալով գեղարվեստական ստեղծագործության ներկայացուցիչը՝ (և ընթերցողի գիտակցության մեջ՝ փոխարինողը) վերնագիրն իր մեջ խտացնում է բովանդակության իմաստային և կառուցվածքային բոլոր բնութագրերը: Այդ վիճակն իր հաստատումն է գտնում Լ.Ս. Վիզգոտսկու հայտնի ուսումնասիրության մեջ այն մասին, որ «վերնագիրը... իր մեջ կրում է ամենակարևոր թեմայի բացահայտումը, նա ցույց է տալիս այն գերակշիռ հատկանիշը, որն իրենով որոշում է պատումի կառուցվածքը»:⁴ Յուրաքանչյուր պատմվածք, իհարկե, մի բարդ ամբողջություն է՝ բաղկացած բոլորովին տարբեր տարրերից, որ կազմված են ստորադասումների և կապերի տարբեր հիերարխիայից, և այդ ամբողջության մեջ միշտ հայտնվում է ինչ-որ գլխավոր տարր, որը որոշում է ամբողջ պատումի կառուցվածքը, և նրա յուրաքանչյուր մասի իմաստն ու վերնագիրը: Այսպիսով՝ վերնագրի և բովանդակության հարաբերակցությունը բնութագրվում է հետևյալ օրինաչափությամբ. վերնագիրը՝ իբրև բովանդակության բառային հակիրձ ձևակերպում, պահանջում է իրեն հետևող տեքստի՝ հեղինակային մտաեղացման ամբողջական կաղապարի պարզաբանում: Սակայն ամբողջական կաղապարը ավարտուն է ճանաչվում միայն հակիրձ ձևի՝ վերնագրի հանդեպ:

Այդ իսկ պատճառով, պատահական չէ, որ վերնագրի մասին խոսում են իբրև «շրջանակային նշանի» (Վ.Ա. Կուխարենկո), այսինքն՝ տեքստի ավարտն ու սկիզբն իրար կապող առաջին և վերջին նշանի մասին:⁵ Նաև՝ գեղարվեստական ստեղծագործության իր վերնագրում «կարճ միացման» (Ն.Ա. Կոժինա)⁶, տեքստային կարգերի, կապերի իրականացման, առաջընթացության և հետադարձության (պրոսպեկտիվ և ռետրոսպեկտիվ) մասնակցության մասին (Բ.Ռ. Գալպերին):⁷

Ելնելով վերը շարադրվածից դիմենք Ս. Լյուիսի «Դոդսվորթ» («Dodsworth») վեպին, որ վերնագրված է գլխավոր հերոսի անունով:

Այս անվամբ վեպը մտնում է գրողի ստեղծագործական ընդհանուր հովվույթ, որի ստեղծագործությունները՝ տանչոքս վեպերից տասը վերնագրված են անձնանուններով, «Քեսս Թիմբերլեյն» («Cass Timberlane»), «Կինգսբլեդ Ռոյալ» («Kingsblood Royal»), «Բաբբիթ» («Babbit»), «Մեյն Սթրիթ» («Main Street»), «Էրրոուսմիթ» («Arrowsmith»), «Էնն Վիկերս» («Ann Vickers»), «Էլմեր Գանտրի» («Elmer Gantry»), «Բոթել Մերրիդեյ» («Bothel Merriday»), «Գիդեոն Պլենիշ» («Gideon Plenish»):

Քննության առնելով գրողի ստեղծագործությունն իբրև մի ինչ-որ միասնություն, մենք շեղում ենք ստույգ ստեղծագործություններից և ի հայտ ենք բերում այն ընդհանուրը, որը մոտեցնում է դրանք, այն, ինչ իրենից ներկայացնում է գրողի ամբողջ ստեղծագործության ոճական ընդհանրությունը: Անձնանունների կրկնելիությունը վերնագրի դերում վկայում է գրողի աշխարհագրացողության բացահայտման մեջ դրանց հատուկ նշանակության մասին: Իրոք, անձնանունների արտահայտչական հնարավորությունների գործածության հակումը կարելի է համարել Սինքլեր Լյուիսի անհատական ոճի ինքնատիպ գերակշիռ բնութագիրը:

Մեր կողմից քննության առնվող «Դոդսվորթ» վեպում լայնորեն տարածված է «խոսացող անունների» («Speaking names») հնարքը: Անձնանունների գործածության մի առանձին խումբ են կազմում այնպիսի համատեքստեր, որոնք ամրակայում են անվանման հենց փաստը (акт) և որոնցում, ելնելով անունից, փորձ է արվում բացատրություն տալ գործող անձին՝ ռեֆերենտին:

Իբրև վերնագիր գործածված անձնանունը, շնորհիվ ուժեղ դիրքի, ձեռք է բերում հատուկ նշանակություն: Այդ տիպի վերնագրերը, որ իրենք են մատնանշում հիմնական թեման, ուշադրությունն ուղղում են նշված գործող անձի կողմը, նրան դնում ստեղծագործության գեղարվեստական աշխարհի կենտրոնում: Դեպքերի գլխավոր մասնակիցը իրար է կապում, ամբողջացնում վեպի առանձին տեսարանները, ինքնուրույն ոլորտները:

Որոշ անունասիրողների կարծիքով՝ անձնանուն-վերնագիրը՝ բովանդակության մեջ մտնելիս՝ չի տիրապետում ոչ առարկայա-տրամաբանական, ոչ զգացմունքային նշանակությունների, իմաստաբանորեն զատարկություն է (Кухаренко В.А.):

Ամբողջությամբ ընդունելով նմանատիպ հաստատման ճշմարտացիությունը մեզ թույլ տանք նշել, որ այն պարզեցնում է հեղինակային միտումների՝ գեղարվեստական մտադրության բարդ հնարքները: Այսպիսով, արդեն կասկած չի հարուցում, որ բառի հնչյունային թաղանթն ունի զուգադրական մեծ ներուժ (պոտենցիալ), այսինքն՝ հնչյունների որոշակի համակցումներն ընդունակ են հաղորդելու որոշակի իմաստներ:⁸ Այդ պատճառով վերնագրի հնչյունային տեսքը, նրա ձևաբանական կազմությունը (Dods-worth՝ առանձնացնելով կեղծածնությունը՝ worth) որոշակիացնում է մեր նախնական ընկալումը, ուղղորդում դեպի գործող անձանց՝ այդ անունով նշված լինելու ներածային (պոտենցիալ) հատկանիշների մոթին՝ նախանշելով հեղինակի որոշակի վերաբերմունքը նրա նկատմամբ (worthy of some value):

Հնարավորություն է ընձեռվում հետևել, թե տվյալ անձնանունի օգտագործման միջոցով ինչպես է ամբողջ ստեղծագործության համակարգում ձևավորվում հեղինակային գնահատականը:

Առաջին անգամ Մեմ Դոդսվորթի (Sam Dodsworth) անունը երևան է գալիս ներկայացուցչական (ինտրոդուկտիվ) նկարագրություններում, այսինքն՝ նկարագրություններում, որոնցում հեղինակն առաջին անգամ ընթերցողին միայն ծանոթացնում է գործող անձանց հետ: Այդ նկարագրությունները բովանդակում են տարիքի, ազգության, մասնագիտական որակավորման, տեղաշարժերի ընդհանուր բնութագրերը, զգացմունքայնության բնույթը, ճաշակները, այսինքն՝ այն տեղեկատվությունը, որը հետագայում սա որոշակիացնում է տվյալ գործող անձի նկատմամբ հեղինակային վերաբերմունքի ազդակը (քմեծադավ շաղախված համակրանքը):

Ներկայացուցչական նկարագրություններում, որոնք ստեղծում են հեղինակային վերաբերմունքի ինքնատիպ նախերգ, անձնանունը հանդես է գալիս առաջնային, նույնականացնող գործառնությով, այսինքն՝ այն գործող անձի հարանմանությամբ, որի փոխարինող նշանով նա հանդես է գալիս տեքստում: Գործող անձից առանձնացված չլինելու շնորհիվ, սկսելով ներառել գործող անձին հասուն կհատկանիշներ և առանձնահատկություններ (steady, industrious, romantic, industrialist), անձնանունն ընկալվում է նրա հետ զուգորդված:

Հարկ է հընթացս նշել, որ առաջին համատեքստի ազդեցության շնորհիվ, որտեղ «industry» գոյականը գործածվում է «hard work» նշանակությամբ, երկրորդ դեպքում հնարավոր է բազմաիմաստաբանական «industry» բառի երկու նշանակությունների միաժամանակյա իրացում («hard work, methods of using machinery»):

Այսպիսով, կատարելով նույնականացման գործառնությ, անձնանունը դառնում է կերպարի՝ իբրև ավելի վաղ նշված հատկանիշների ամբողջության կրողի ներկայացման հիմք: Դրանց ընտրությունը տրվում է իբրև նկարագրված (գործող անձի կամ հեղինակի) «տեսակետ»:

Ինչպես հայտնի է, գործող անձանց անունների հաճախակի գործածության անհրաժեշտությունն առաջ է բերում անձնանվան հետ միասին նույնականացնող, այլ օբյեկտի երկրորդական անվանումը ցույց տվող ձևերի լայն գործածություն: Նմանատիպ գնահատող որակավորող նկարագրությունները, ի հայտ բերելով գործող անձի ինչ-որ հատկանիշը, հնարավորություն են ստեղծում ցույց տալ նրան իր բոլոր բնութագրերով և առանձնահատկություններով: Այսպիսով, անձնանունը հարաբերակցվում է նմանօրինակ բնութագրերի հետ, սկսում իր մեջ ներառել դրանց բովանդակությունը:

Այսպես, եթե նախապես Sam Dodsworth-ը ներկայացվում է որպես «the president of the Revelation company», հետագայում այդ անվանն ամրակայվում է «The Great Man» բնութագիրը (հեղինակն ազատորեն հակվում է անձնանունը բնութագրով փոխելուն):

Հարկ է նշել, որ այդ գործածությունը զուգահեռ ծնվում է անվան՝ նախատիպին հեյդուսաձևաբանական բաղադրիչներով հարաբերակցվող զուգորդական (ասոցիատիվ) լուսապատկեր: Sam Dodsworth = Someone worthy; worthy fellow: Այս զուգորդությունների ձևավորմանն օգնում են հետևյալ համատեքստերի երևան գալը.

he needed... anything to assure him that he was some one and meant something. (p.60)

He felt, Sam, like a worthy parent,

watching his daughters and a suitor. (p.79)

Տպավորություն է ստեղծվում, որ վերնագրի հեյդուսային կազմությունն իր արտացոլումն է գտնում «Someone» և «worthy» բառերում:

Հեղինակային գնահատականը պատումի տարբեր տեսակներում խորանում և բարդանում է անձնանվան և «Somebody» բառի գործածության հաշվին:

Սյուժեի զարգացման հետ տեղի է ունենում գործող անձանց հեղինակային հետագա գնահատականի խորացում. աշխատանքի կորստի հետ Սեմ Դոդսվորթը վերածվում է «a faceless man trying to develop a face for himself», այսինքն՝ մի մարդու, որ աշխատանքը կորցնելու հետ կորցնում է սոցիալական դիրքը, հավատն ինքն իր նկատմամբ և փորձում է ձեռք բերել նոր, բոլորովին այլ իդեալներ: Իր «ես»-ի կորուստն ընդունում է իբրև իր անվան կորուստ. «He was no longer Samuel Dodsworth»:

Անձնանվան կորուստը փոխանցվում է բառագիտական տարբեր միջոցներով: Դրանց շարքում ամենից առաջ հարկ է նշել ավելի վաղ նշված և հականիշի որակներով հարաբերակցության մեջ գտնվող արժեվորող (оценочные) ածականները (great man - little; worthy- unworthy), ժխտական նախաձանցներով բառերը (worthy- unworthy, unwanted), ժխտական դերանունները և մասնիկները (he meant something- he meant nothing; he was no longer Samuel Dodsworth):

Սկսվում է նրա <worth> հատկանիշի վերանայումը.

He had no longer the dignity of a craftsman.

He made nothing. He meant nothing. (p. 22)

He was no longer Samuel Dodsworth, but merely part of a crowd vigorously pushing on another toward nowhere. (p.179)

He felt unworthy, he felt unwanted. (p. 22)

He belonged to the unwanted generation. (p.179)

"If you'd get over this naive passion for 'simplicity' and all these peasant virtues and let yourself be the big man that you really are. Not meekly say to his Excellency that though you look like a grand-duke, you're really only little Summy Dodsworth of Zenith." (p.232)

Նրա կնոջ՝ Ֆրենկի խոսքում «great», «worthy» որակումները վերինաստավորվում և ձեռք են բերում երգիծական – նվաստացուցիչ երանգ.

"Count Obersdorf was telling me all about his family, and it was frightfully interesting, and suddenly you feel sleepy and-bang! The great Samuel Dodsworth is sleepy! The great industrial leader wants to go home. Everything must break up immediately. Nobody else must be considered! The great I am has spoken". (p. 242)

I was so happy with Kurt-till two minutes ago. And then I find you here, a prowling elephant-oh yes, the great Mr. Dodsworth, the motor magnate, who has a right to commander my soul and my dreams and my body. (p.287)

He said that you... were a worthy motor-peddler. (p.100)

Սեմ Դոդսվորթը, քննադատաբար գնահատելով իրեն, փորձում է, փոխելով նախկինը, ձեռք բերել մի նոր կերպար:

I've wanted to be more than a money-coining machine. To be something. Though God knows that. (p.230)

Սեմը, նախապես հեղինակի կողմից ներկայացված իրրև "great industrialist", ընթերցողի աչքի առաջ վերածվում է կնոջը արտասահմանյան ճանապարհորդությունների ժամանակ ուղեկցող զավառացու.

In London, thank to the attention of Mr. A. B. Hurd, Sam had retained something of a position as an industrialist. Since then, progressively, he had become merely the Husband of the Charming Mrs. Dodsworth. He saw it though he could not see precisely how it had happened. In Berlin, he felt that no one considered him as anything save her attendant. (p. 249)

Հերոսի մասնագիտական հատկանիշների բարձր գնահատականը փոխարինվում է հերոսին սույլ որպես իր կնոջն ուղեկցող ներկայացնող որակներով: Միաժամանակ, համապատասխան բացասական բառակապակցությունների առկա շանյությունն ուժեղացվում է սաստկական «merely» (merely the Husband of the Charming Mrs. Dodsworth) մակբայների սահմանափակող նախդիրի գործածությամբ:

Վերագնահատող հարաբերությունների ազդանշան են դառնում նաև «provincial manufacturer», «worthy moter-peddler», «Samuel Dodsworth of Zenith» բառակապակցությունը:

...Sam came abruptly out of his mediation was again the large and prosperous American husband of a lovely American wife, a worthy husband listening with meekness to the conversation of her European friends. (p 230)

It took him a time to perceive that perhaps he really was accepted by Edith...as something more than the provincial, insensitive, Midwestern manufacturer whom Fran had pitied. (p.337)

“This town knows a lot” said Samuel Dodsworth of Zenith”. (p.254)

Հերոսի կողմից՝ իրեն ինչ-որ բանում դրսևորելու անհրաժեշտության գիտակցման հետ, ըստ սյուժետային գծի զարգացման՝ անձնանունն ավելի է լրացվում նոր բովանդակությամբ, ներառում նրա մտքի աշխատանքը և զգացմունքների ընթացքը՝ նշելով մտածող, դատող, մշտապես իր ապրումներն ու խոհերը քննող մարդու: Վեպի վերջին մասում նախատիպին վերջնականապես ամրակայվում է իր դեմքը փնտրող մարդու ընդհանրացնող-բնութագրական նշանակությունը: Այդ բանին օժանդակում է անձնանվան հետ մտավոր գործունեությունն ցույց տվող՝ meditated, thought, reflected, knew, it occurred to him; it came to him, բայերի գործածությունը, որոնք հերոսին հանգեցնում են կյանքի արժեքավոր կողմնորոշիչների, տարբեր ազգությունների մարդկանց փոխհարաբերությունների մասին մտորումներին: Կրկին գեղագիտական հատուկ նշանակությամբ են հանդես գալիս այն դեպքերը, երբ վերնագրի հնչյունական կազմը կարծես թե վեպի գեղարվեստական բովանդակության մեջ գրաշրջվում է, երբ վերնագիրը վեպի տողերում ձեռք է բերում հնչյունային անդրադարձ: Հերոսի ներքին մենախոսության մեջ գտնում ենք.

“... I'm glad I'm an American...

I'm never going to be European.

...And you're still dodging the issue, my lad!”

“What is Sam Dodsworth going to do about the fact that he's as provincial as a prairie dog, and that he's only fifty-one, and he's discovered a world...” (p.121)

Եվ այսպես, «worthy» (worthy) բառը, հանդիսանալով հատուկ անվան կազմության բաղադրիչը, վեպում դառնում է վճռորոշ: Եթե այն նախապես կապակցվում է գործող անձի մասնագիտական բնութագրի հետ (գործող անձի մասնագիտական բարձր գնահատականի հետ)՝ «The great industrialist», այնուհետև անցնում է բացասման աստիճանին (he felt unworthy), իսկ վերջում, արդեն ստեղծագործության վերջին էջերում, ինքնադրսևումը հաստատում իբրև կյանքի արժեք: Այդ պատճառով պատահական չէ, որ վեպի ավարտական (վերջին) պարբերությունները հաստատում են ընթերցողի այն միտքը, որ գլխավոր հերոսի անունը (հետևաբար և՛ վերնագիրը) ձեռք է բերում խորհրդանշական իմաստ:

Անձնանվան բնութագրական գործառույթի իրականացմանն աջակցում է նրա՝ ստորագրելիական դիրքում գործածությունը, անցյալ կատարյալ ձևի հետ զուգակցված (having been Samuel Dodsworth) հանդես գալը և, հաջորդող հերոսին անմիջապես մի քանի «would be more ruthless, less bound, less sentimental, could be a poet, governor, an explorer»՝ ածական և գոյական անուններով արտահայտված կոնկրետ բնութագրումներ տալը:

Այսպիսով, հանդես գալով տարբեր համատեքստերում և հենց հերոսի որակների ու հատկանիշների հաշվին ստանալով իմաստաբեական ամբողջություն՝ եզրափակիչ մասում վերնագիր-նախատիպը ձեռք է բերում խորհրդանշական իմաստ, երևան գալիս իբրև որոշակի վարքի տեր, իր “ես”-ի փնտրտուքներում գտնվող մարդու նշան:

Գործող անձին բացահայտելով տարբեր կողմերից, հեղինակը ձգտում է ընդհանուր բնորոշումները և բնութագրերը վերածել ստույգ, անընդհատ փոփոխվող անհատի գեղարվեստական հայեցակարգի:

Գրականություն

1. Гальперин И. Р. Текст как объект лингвистического исследования. —М., 1981. —С. 133-134; Гей Н.К. Художественность литературы. Поэтика. Стил. —М., 1975, Гл. 4. —С. 181-211; Джанджакова Е. В. О поэтике заглавий // Лингвистика и поэтика. —М. 1979. —С. 207-215; Джанджакова Е. В. Об использовании цитат в заглавиях художественных произведений // Структура и семантика текста. Воронеж, 1988. —С. 30-37; Домашнев А. И. Интерпретация художественного текста. —М., 1983. —С. 43-45; Золян С. Т. О семантике поэтической цитаты // Проблемы структурной лингвистики: 1985-87гг. —М., 1989. —С. 152-164; Кожина Н. А. Заглавие художественного произведения: онтология, функции, параметры типологии // Проблемы структурной лингвистики: 1984. —М., 1988. —С. 167-183; Козлов С. Л. К поэтике заглавий в русской литературе первой половины 19-ого в. // Вопросы жанра и стиля в русской и зарубежной литературе. М., 1979. —С. 20-29; Кухаренко В. А. Интерпретация текста. —М., 1988, гл. 11. —С. 90-101.
2. Козлов С. Л. К поэтике заглавий в русской литературе первой половины 19-ого в. // Вопросы жанра и стиля в русской и зарубежной литературе. М., 1979. —С. 20-29.
3. Анольд И.В., Стилистика современного английского языка. —Л., 1973. С. 303.
4. Выготский В.С., Психология искусства. 3-е изд. —М. 1988. С. 572.
5. Кухаренко В.А., Интерпретация текста. Учебное пособие. 2-е изд. —М., 1988. С. 188.
6. Кожина Н.А., Заглавие художественного произведения: онтология, функция, параметры типологии. // Проблемы структурной лингвистики: 1984. —М., 1988. С. 167-183.
7. Гальперин И. Р. Текст как объект лингвистического исследования. —М., 1981. —С. 133-134;
8. Давыдов М. В. Звуковые парадоксы английского языка и их функциональная специфика. —М., 1984. —С. 101—115; Федеев В. Б. Паронимическая аттракция в английском языке. — Автореф. дисс... канд. филол. наук. —М. 1982.